

Թերթ կը զրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
վեցամս. 5 "
—
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "
Ամերիկա
2 Տղ. 30 սենդ
ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

— Огговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

2. ՏԱՐԻ

— ՅՈՒԼԻՍ 13 ՇԱԲԱԺ 1902 —

ԹԻԻ 256

ՆՈՒԵՐ

Ըստ մեր խոստման՝ կանխիկ վճարող բաժանորդները այսօրուան համարին հետ կը ստանան ներկայ շրջանի առաջին եռամսէին համար պատրաստած թիւ 1 Յաւելուածն՝ որ է ՄՈՒԼԻՍԻ գործերէն, «ԱԸ ՊԱՐՊՈՒԼԻՔ» անուն ծածկաշարժ կատակախաղը:

ԱԶԳԱՅԻՆ

Սէլանիկէն Պատրիարքարան հասած գրութիւն մը կը ծանուցանէ թէ երկրաշարժի ցնցումները կը շարունակուին եւ թէ ժողովուրդը վրաններու տակ կը բնակի: Հայերն ալ, միւս հառարակութեանց պէս, հսկում կ'ընեն ի նորոյ կառուցուելիք եկեղեցիին տեղւոյն վրայ:

— Բաղէշի ազգայիններէն Շուրիկեան Մ. Ղարիպճան աղա, նախորդ ամսոյ 22ին մեռիւ է 98 տարեկան հասակի մէջ: Հանգուցեալը 500 ոսկի տուած է Երուսաղէմի, տոկոսը ժառանգաւորաց վարժարանին յատկացնելու պայմանաւ:

— Քէօթահիոյ Առաջն. Տեղապահ Տ. Մկրտիչ Ծ. վարդապետ Աղաւնունի, երկու ամիսէ ի վեր

Էօկի-Շէհր կը գտնուի, տեղւոյն եկեղեցիին շինութեան համար, ուր 400 ոսկիի մօտ հանգանակութիւն մը կատարեւր է այս նպատակով:

— Թողտտի Զիլէ գիւղաքաղաքի մէջ ազգային վարժարանի մը հիմնարկութեան հանդէսը կ'աւարտուի է Մայիս 25 ին:

— Նիկիոմիդիոյ Առաջնորդ Տ. Ստեփաննոս եպիսկոպոս Յովակիմեան, քանի մը օրէ ի վեր Պարտիզակ գացած է, ուր ձեռնարկած է բաղնիքի մը շինութեան, իբրեւ հառութարեր կալուած:

— Աւստիոյ կառավարութիւնը առաջարկեւ է՝ 1 միլիոն ֆիօրինի (իւր 115 հազար ոսկի) գնել վիէնայի Միլիթարեան միաբանութեան վանքն, և միացեալ շինուորական դրացի հաստատութեան բայց միաբանութիւնը 3 միլիոն ֆիօրին պահանջելու է, առարկելով թէ շինութեան համար 250 հազար ֆիօրին ծախք եղած է, և դեռինք՝ որ կայսերական նուէր մ'է, աւելի սուղցած է հիմա:

— Գահիրէէ կը գրեն թէ՝ Եգիպտոսի գիւղաքաղաքաց մէջ մերայինք կրթական գործն առաջ կը տանին, թէ՝ Իպրահիմիյէի մէջ արդէն երկուեւ ծաղկոց մը բացած են, և թէ Ասիուլի (վերին Եգիպտոս) ազգայինք ալ բազմացած են եւ վարժալան պիտի բանան:

Սիլիստրէի եկեղեցւոյ հովիւ Արթ. Տ. Տաճատ քահանայ Դերձակեան որ քանի մը օրէ ի վեր քաղաքս կը գտնուի, հանդերձեալ է վաղը, կիրակի Ս. Պատարապ մատուցանել տեղւոյս եկեղեցիին մէջ:

ՏԻԿԻՆ, ՄԷՅՐԻԷ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ֆրանսական տկարեմիան իր վերջին նիստին մէջ Օտիֆորէտ անուն արքանակը — որը հաստատուած է անձնուիրութիւնը վարձատրելու — յատկացուց տիկին Մէյ-րիէի որ Անդրիանուպօլսոյ (Էտիրնէ) այսօրուան ֆրանսական հիւպատոսին կինն է:

Հայկական դժբաղդութիւններու ժամանակ, կոտորածներու ամենատաք միջոցին Պրն. Մէյրիէ (իւր կնոջ և զաւակներով միասին) Տիգրանակերտ կը գտնուէր ֆրանսական Դեր—հիւպատոսի պաշտօնով, եօթ հարիւր Հայեր ապաստանեցան դեր—հիւպատոսարանի մէջ ֆրանսական դրօշին տակ. գարնան մէջ բազմաթիւ հայեր ուղեցին գաղթել և երթալ մինչև Կիլիկիան Ալեքսանդրիա (Ալեքսանտրէթ) անկէ նաւով մեկնելու. . . . Ամէն կողմ սարսափ կը տիրէր, որովհետեւ թէպէտ պաշտօնական կոտորածը առժամապէս դադարած էր, բայց անպաշտօն ջարդերը դեռ կը շարունակուէին ամէն կողմ. թիւրք և քիւրտ ուր որ հայու մը հանդիպէին, զայն ըսպաննելը բարի գործ մը կը համարէին, քանի որ Ալլահի ստուերին, հաւատացեալներու հրամանատարին կամքը այն կը պահանջէր. . . . Արեւմտեան հասցին վտանգի կենթարկուէին հայերը Տիգրանակերտէն մինակ մեկնելով. Պրն. Մէյրիէ առաջարկեց ինքն անձամբ առաջնորդել հայերուն մինչև Ալեքսանտրէթ, բայց քաղաքին մէջ մնացող միւս հայերը վտանգի մէջ էին, որովհետեւ նոր ջարդերու լուրեր կը տարածուէին, ուստի գաղթողները չուզեցին ընդունել դեր—հիւպատոսին առաջարկը:

Տիկին Մէյրիէ ինքզինքն առաջարկեց իբր առաջնորդ և պաշտպան գաղթող հայերուն, որոնք ուրախութեամբ և խորին երախտագիտութեամբ ընդունեցին տիկնոջ պաշտպանութեան տակ մտնել: Մեկնելու օրը թուրք կառավարիչը ուղեց անձնապահ զօրքեր տալ տիկնոջ, բայց սա պատասխանեց թէ «Զօրքերը պաշտպանելու են և հայերը, հակառակ պարագային, ինքը մինակ պէտք չունի զօրքի»: Փաշան այս պատասխանին շատ չի հաւնեցաւ, բայց ստիպուած եղաւ պահանջող ուղեկիցներ դարձեալ տալ: Մօտ քսան օր հարկաւոր էր գաղթող հայերուն Տիգրանակերտէն Ալեքսանտրէթ հասնելու համար: Ճանապարհին բաւական արկածներ պատահեցան, որոց մէջ տիկին Մէյրիէ իր քաջասրտութիւնը ու անձ-

նուիրութիւնը ցոյց տուաւ: Ամէն տեղ երբ կիմանային թէ ֆրանսայի դեր—հիւպատոսին կինը գաղթող հայ խումբին հետ է, չէին համարձակել յարձակում գործել և հայերուն պաշխլ: Անընդհատ կարաւանը կը հասնի Պիրէճիք ուսկից անցնելու էր Եփրատ գետը, պէտք էր տեղւոյն կառավարչէն թղլտուութիւն խնդրել: Տիկին Մէյրիէ իւր ոտքը բերել տուաւ թուրք կառավարիչը և հետեւեալ կերպով խօսեցաւ անոր հետ,

—Պէտք է այս երեք հարիւր հայերը Ալեքսանտրէթ առաջնորդեմ, հրաման կուզեմ անոնց հետ ջրէն անցնելու:

—Ինձ ըսին, կըսէ թուրքը, թէ դու ֆրանսական դեր—հիւպատոսին կինն ես, ես բու ծառադ եմ: Բայց ո՞վ կընայ զիս ապահովցնել թէ այս Հայերը չեն երթար Պիրէճիքը թալլելու:

—Ինչպէս կարող են այդ բանը ընել քանի որ զէնք չունին և թուով բու մարդիկներէդ քիչ են:

—Այո՛, բայց ի՞նչ պիտի ըսէ իմ տէրս, Ալլահի մարգարէն, եթէ թողում որ հայերն անցնին: Ես բու տրամադրութեանդ տակ եմ, թո՛ղ հայերը և եկ քեզ անցնեմ բու զսւակներով:

—Լա՛ւ կըսէ տիկին Մէյրիէ —նոր քաղաքար մը յղանալով— նախ տա՛ր ջրի միւս եզերքը իմ չորս երասխաներս, մինչև ես հայերուն բանակցիմ: Թուրք կառավարիչն երբ վերադարձաւ, երեք հարիւր հայերն իւր ձեռքին մէջ ունենալու յոյսէն ուրախ, տիկինն ըսաւ անոր սպանական ձեռով:

—Լսէ՛, երդում ըրած եմ այս հայերը կամ ազատել եւ կամ անոնց հետ մեռնիլ, եւ ահա ի՞նչ որոշեցի. ամենէն վերջը ես պիտի անցնիմ ջրէն, բոլոր իմ պաշտպաններս պէտք է ջրէն անցնին եւ կամ ես անոնց հետ այստեղ պիտի մնամ. . . . Բայց գիտցած եղիր որ եթէ ջրի միւս կողմը իմ զաւակներուս գժբաղդութիւն մը պատահի դու պիտի լինիս պատասխանատու: Այո՛ ես ֆրանսայի Դեր—հիւպատոսի կինն եմ եւ ֆրանսան գիտէ թէ ինչպէս պէտք է յարգել տալ զինքը ներկայացնողները: Ուրիշ ինչպէս կուզես այնպէս վարուէ: Կառավարիչը՝ այս առնական խօսքերէն սիրտը փրկած, բոլոր կարաւանը ջրէն անցուց: Քանի մը օր յետոյ տիկին Մէյրիէ կը վերադառնար Տիգրանակերտ, ուրիշ հայերու առաջնորդելու: Ահա այս հերոսական կնոջ յատկացուց ֆրանսական Անդրեմիան անձնագոհութեան արքանակը:

ԷՍԴ—ՈՒԷՍԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

(Պատասխաններ Հինգ Հարցումներու)

«Հետեւեալ նամակը զրկուած է Պոսթօն Իվր-նիկի Թրեմսֆրիքի կարող եւ հանրածանօթ խմբագրէն, մարդէ մը՝ որ իր տաք եւ զգայուն սրտովը բարեկամ հանդիսացած է ամէն երկրի հալածուածներուն, և երբեք թերացած չէ իր խորազգած և անկեղծ համակրութիւնը յայտնել Հայ ժողովրդին համար:» «Կոչնակ»

Պոսթօն, Մայիս 9 1902

Սիրելի Տէր,

Ձեր ներկայացուցած հարցումները ինծի համար այնքան գրաւիչ եւ աշխարհի համար ալ այնքան մեծ կարևորութիւն ունեցող խնդիրներ կը հարուցանեն, որոնց մասին չեմ համարձակիր յանպատրաստից կարծիքներ յայտնել: Իմ դատողութիւնս հարցունեցելով, անշուշտ, ինձ չափազանց պատիւ մը չառլլած կ'ըլլաք, սակայն չեմ կրնար չխորհիլ թէ մի գուցէ սխալ խորհուրդ մը տալու վտանգին մէջ գտնուած ըլլամ:

Իմ մասին, եթէ եղած ըլլայի այնպիսի Հայ մը, ինչպիսի Ամերիկացի որ եմ այսօր, և տեսնէի որ Թուրքին պէս կառավարութիւն մը կը ծծէր իմ չքնաղ հայրենիքիս կեանքի արիւնը և զայն կը դատապարտէր Թիլին Դարերու խառնուրդին մէջ հոգեվարքով մաշուելու, գիտեմ՝ թէ հանդարտ չէի կրնար նստիլ: Բոլոր համակրութիւնս կուտամ անոր, ովոր ալ ըլլայ, որ բան մը կ'ընէ, ինչ միջոցով որ կրնայ, վախճան մը տալ ներկայ Սուլթանին քստմնելի և մահաբեր ճշտումին: Անշուշտ երկտառարգ Թուրքիայի կուսակցութեան հետ միանալ Հայերու համար գաղափարական ծրագիր մը պիտի ըլլար: Պարագանքներ եղան, երբ յոյսեր ունեցայ թէ այսպիսի միացում մը թերեւ կարելի ըլլար, սակայն նկատելով թէ՛ որքան դիւրագրգիռ են Հայեր իրենք, — միակ «թերութիւնը իրենց բարեմասնութեանց» իբրեւ հանրօգուտ գործիչներ — և որքան անկարելի է Պոսթօնի մէջ գտնուած ափ մը պանդուխտներուն նոյն իսկ ամենալու մասին մէկտեղ գալ ու գործելը, խոստովանելու եմ որ շատ վստահութիւն չունիմ թէ Հայեր կարող պիտի ըլլան թուրքերու հետ երկարատեւ գործակցիլ, և երկար ու հանգարտ առնչացում մը պէտք է, մինչև որ ժողովուրդին մնայուն արժէք ունեցող այժերը մէկտեղ միացուին:

Եթէ հարցը այս նպատակով ուսանէի, թերեւս վերջապէս ամենէն մոտաւոր կարծիքը այս պիտի ըլլար որ պիտի կրնայի ձեզի տալ:

Ձերդ ձշմարտիւ
Է. Հ. Բլէմէնթ

ՎՍԵՄ ՆՈՐԻՄԱՆ ԽԱՆ

Վիէննայի պարսկական դեսպան հայազգի Վսեմ Նարիման խանի գէմ մէկ երկու աւտորիական թերթեր չարամտութեամբ զրպարտութիւններ հրատարակած էին: որպէս թէ Նորին Վսեմութիւն իր դեսպանական առանձնաշնորհօք մեծ օգտուելով, սահմանազլիւն առանց մաքսի գորգեր ներս մտցունել տուած է և այլն: Այդ զրպարտական լուրերի մասին հարցում լինելով Աւսարիայի Երեսփոխանական ժողովին մէջ, աւտորիական կառավարութիւնն այդ առթէ օգտուեցաւ պաշտօնապէս յայտարարելու թէ իրենք ամէն բան քննելով անգեղացած են որ բոլորովին անհիմն զրպարտութիւններ են այդ լուրեր և մեծ գովեստով յայտարարեց նաեւ թէ Վսեմ Նարիման խանին 25 տարիէ ի վեր շարունակ Վիէննայի մէջ վարած դիւանագիտական պաշտօնն ամբողջովին անարատ և իր հանճարի համար պատուաբեր եղած է, որով վայելած է միշտ կայսեր մեծարանքը և Վիէննայի ամբողջ բարձր դատակարգի համակրանքն ու յարգանքը:

Երեսփոխանական ժողովը ծափահարութիւններով ընդունեց նախարարապետին այս յայտարարութիւնը, ինքն ալ իր կողմէ յարգանքի ցոյց մը ընելով հայազգի դիւանապետին:

Եւրոպան Ամերիկայի Միացած

— Ֆրանսական մեծ ընկերութիւն մը որ մօտ 200.000.000 տօյրի գրամագրութիւն մը պիտի ունենայ, ծրագրած է երկաթուղիի հսկայական գլծով Ամերիկան միացնել հին աշխարհին հետ: Ծրագրուած գլծը պիտի սկսի սիպիրական երկաթուղիի Իրքուխի ծայրէն շարունակելով Սիպիրիայ ընդարձակ դաշտերով պիտի գայ հանգի Արեւելեան գլուխին, ուր Պէրինկի ջրանցքը 40 մղոն լայնք միայն ունի: Հոգ ջրանցքին տակէն փապուղի մը պիտի շինուի, ուրիշ կառաւմբերը ամերիկեան ցամաքը պիտի կրնան անցնիլ: Գիծը Քար Բոնէնէն պիտի շարունակուի արեւմուտք մինչև Էլի Սիթի, ուր պիտի միանայ ամերիկեան ուրիշ կառուցուելիք գծի մը հետ Գոքեռ Ռիպէն հովիտով մէնչև Վաշինգտոն: Այդ տեղէն կարճ ժողովին ճամբորդութեամբ մը գէպի Բիւկնի Սունս — Փարիզը պիտի կրնայ միանալ Նիւ Եօրքի հետ:

Մ. Բոյլ սիպիրա-ամերիկեան գծին շինութեան արժէքը 100 միլիոն տոլ. կը հաշուելու:

ԽՈՂԱՆՈՑԸ

Աստա՛հ էք որ տանտիկին է ձեր կինը, քոյրը կամ մայրը:

Եթէ կասկած ունիք այս մասին, եթէ անպատգամ գաղափար կալուած էք անոնց տնարարութեան նկատմամբ, զգուշացէ՛ք, բնաւ մի փորձուիք մտնել ձեր տան խոհանոցէն ներս, որուն պարզած ոլորմելի տեսարանը բոլորովին պիտի խրոչեցնէ զձեզ տունէն:

Ամենէն առաջ զգուշի հոտ մ'է որ պիտի դիմաւորէ զձեզ խոհանոցին դռնէն որմէ ներս, իւրաքանչիւր գիշուած պիտի գտնէք ստուար շարք մը 2—3 օրուան աղտոտ ամաններու, սոխի կեղեւներ, բանջարեղէնի տերեւներ, ձիթապլտուղի կտուտներ, կտրուած ձկնաբլիթ մը վրան բոց, պնակ մը կերակուր որ աշխած է այլեւս, ուրիշ կերակուր մը, որուն վրայ հարեւաւոր ճանճեր քատրիլ կը խաղան, շուրի գոյլ մը՝ նեխած ու ապականած, խոհանոցի շնչոցներ՝ շաքաթներէ ի վեր օճառի երես չտեսած՝ զոգլոր, կեղտոտ երեւոյթով, միսի տախտակ մը, նալըններ՝ ումանց կաշին բրթած և ումանք ալ կռնակի վրայ գարձած, դանակներ մեծ ու փոքր՝ ամենքն ալ աղտոտ, ձուկոտ, միսոտ, որոնք սոխ կը հոտին անխտիր: շուրի գաւաթներ՝ չիշեր որոնց բնական գոյնը կարելի չէ որոշել իրենց վրայ արմատացած աղտէն եւ իբր պոսկը այս ամէնուն պիտի դիմաւորէ զձեզ տանտիրոջին աղտոտ հագուստով, կեղտոտ ձեռքերով ու յաւէտ զգուշի երևոյթով:

Տիկիններուն չէ սակայն յանցանքը, ինչպէս աղջիկ՝ այնպէս հարս, ինչպէս հարս՝ այնպէս տիկին: Ո՛վ, ո՞ր դպրոց տնարարութիւն կը սորվեցնէ մեր աղջիկներուն, ո՞վ անոր օրտին մէջ կ'արթնցնէ սէրը խոհանոցին, մառանին, հանդերձարանին, մանկատանութեան, կար ու ձեւին: Իրաւ է որ ամէն բան դպրոցներէ տկճնակալել արդարութիւն չէ, գոնէ տնարարութիւնը պէտք է օրօրոցէն սորվի աղջիկը. այո՛, իրաւացի է այս նկատում, բայց երբ մայրը գաղափար չունի տանտիկնութեան վրայ, ի՞նչպէս կարող պիտի լիլայ զայն աւանդել, սորվեցնել իր աղջկան: Արդէն մեր խօսքը ժրագլուխ տնարար մայրերուն չէ, անոնք զարդը, պսակը, երջանկութիւնն են իրենց ընտանիքին զաւակներուն, հարսերուն ու թոռներուն, անոնց ձեռքէն ելած աղջիկները թանկագին գոհարներ են և եթէ հինգ փարա գրամօթիտ չունենան իսկ, ի-

րենց տնարարութիւնը հալարաւոր ոսկիներ կ'արժէ:

Մենք այն ոլորմելի, արգահատելի մայրերուն, աղջիկներուն համար կ'ըսենք թէ, ո՞վ պիտի սորվեցնէ անոնց՝ սուս կառավարելու ամենէն ծանր դիտութիւնը: Եւ կը կարծենք որ դժբախտաբար մեծ է հիմա թիւը թափթփած մայրերուն յորմէ հետեւ աղջկանց դպրոցները ընդհանրապէս և տնական կրթութիւնը տեղի տուաւ անուանական ուսումներու որոնցմով կը զբաղին շատ մը օրիորդներ օրն ի բուն, չգիշանելով նոյն իսկ խոհանոցին դռնէն ներս նայիլ: Այս կրթութիւնով հարս կ'ըլլան, որուն կը յաջորդէ բնականաբար ոլորմելի մայրութիւն մը:

Ի՞նչ է այս անհաշիւ դաստիարակութեան պատճառը, ի՞նչու մեր իսկ ձեռքով քանդենք մեր տուները, ո՞ր երկրի, ո՞ր ժողովուրդի, ո՞ր աղջի մէջ տեսնուած է որ աղջիկը փոխանակ իրեն անհրաժեշտ պէտք եղածները սորվելու, օգային ուսումներով սպառէ ժամանակը մինչեւ տանը-ութը, քսան աարիքը, Դաշնակ, գաղեթէն, հին աղգաց պտտմութիւն, ի՞նչ են ասոնք, ո՞ր աղջիկ օգտուած է այս դասերէն, քանի՞ կին կրնաք ցուցնել որ գաղեթէն սորված ըլլայ մեր դպրոցներէն և կամ նոյն իսկ եթէ բացառաբար մէկը սորվի, ի՞նչ բանի պիտի ծառայեցնէ այդ լեզուն եթէ ոչ անլուր զէվզէկութիւններով ահուանոյն սիրտը պղտորելու:

Աղջիկներու ուսումին, դաստիարակութեան դէմ զինուել բնաւ չանցնիր մեր մտքէն, անոր համար որ փորձով դիտենք թէ դաստիարակուած, ուսեալ մայր մը ի՞նչ մեծ օգնութիւն է տան համար. բայց երբ կը տեսնենք հազարաւոր զոհերը սխալ դաստիարակութեան, երբ կը տեսնենք հարսեր որ հաւկիթ մը տապկել չեն գիտեր, երբ հանգիստտես կ'ըլլանք ընտանեկան այն կարգի վէճերու որոնց պատճառը կնոջ թափթփածութիւնն է. երբ կը տեսնենք աշխատ սուրներ որոնց երկու օձիքը մէկտեղ չի գար իրենց անհաշիւ կնոջ ոչ-տնարարութենէն. հարկ կ'զգանք ձայն բարձրացնել, բողոքել աղջիկներու տրուած աննպատակ դաստիարակութեան դէմ:

Տիկինն աւելի կ'ին պէտք է մեր տոներուն մէջ, ընդհանուր առմամբ սալօն չունինք մենք, որ սրոշեալ օրեր հիւր ընդունին տիկինները՝ այցելութիւն փոխանակին, գեսպակ կառք նըստին, կարսօններ ընդունելութիւն ընեն: Մենք

ո՛վ, այս վիպական կեանքը ո՛վ, Եւրոպայի մէջ
խօս անոնք միայն այս կարգի պերճ կեանք կը
վարեն որոնք հարստութեան կատարը հասած մի-
լիառատէրեք են և կամ անոր հակառակը՝ թըշ-
ուառական բախտախնդիրներ որ իրենց սալսնը,
պերճութիւնը ծուլակ բռնած մարդ խաբելու,
դրամ շորթելու միտք ունին:

Մենք որ ընդհանրապէս ոչ միլիառատէր
ենք ո՛չ ալ բոխտախնդիր, այլ հարկւրին ին-
նսուն, հանդարտ սրտով գործի մարդիկ, որ մեր
տուններէն միայն հաճոյք զգալ կ'երազենք, ին-
չո՛ւ ուրեմն այնպէս մը չգաստիարակենք մեր ալ-
ջիկները որ ընտանեկան բոյնը հրապուրիչ ըն-
ծայել գիտնան իրենց օրն ի բուն յոգնած, դադ-
րած ամուսնոյն:

Ո՛րը կը նախընտրէք, ո՛վ ամուսնացած կամ
ամուսնանալիք երիտասարդներ, այն տիկի՛նը
որ երբ տուն վերադառնաք դաշնակով կամ գալ-
ետէնէն գրքով զբաղած գանէք, թէ՛ այն սիրուն
կինը ու տունը տեղը մաքրած, կերակուրը պատ-
րաստած, տղաքը քնացուցած, ձեզ կ'ընդունի
ժպտաղէմ: Տիկի՛ն մը կ'ուզէք ձեզ համար որուն
քմահաճոյքն իրուն ծառայէք, թէ՛ կեանքի ընկեր
մը որ ձեր բեռը թեթեւցնէ, Թանկագին գո-
հար մը կուզէք որուն վրայ ուրիշներ միայն հի-
անան ու ամէն օր վտանգ սպառնայ ձեզ, թէ՛
հասարակ մեծաւ մը որմէ ամէն ժամ օգտուէք
ու խաբիսիւր ըլլայ ձեր ընտանիքին:

Այս կէտերը նկատողութեան առէք, ո՛վ մայ-
րեր ու դաստիարակներ, ամենէն առաջ խոհանո-
ցը, անոր կառավարութիւնը սովորեցուցէք ձեր
աղջիկներուն, կերակուր եփել, աման լուալ, տուն
աւել, կար կարել, մաքրութեան հսկել, ասոնք
են անհրաժեշտ պէտքերը ձեր աղջիկ զաւակնե-
րուն, անոնցմով է որ պիտի երջանկացնեն իրենց
ապագայ ամուսինները որոնք փորձուելով ուրիշ-
ներու տառապանքէն, աւելի քան երբէք տնա-
րարութիւն կը փնտռեն հիմա աղջիկներուն վրայ:


Մեզք որ տնարարութեան գործնական գա-
լաւանդուիր թաղային գպրոցներու մէջ ուր կը
նային դաստիարակելի թափթփած մայրերու
աղջիկներն ալ, ամենէն աւելի այս դասերը
պահանջելու են ծնողք գպրոցներէն եւ ո՛վ որ
գահացում տայ իրենց՝ հոն զրկելու են իրենց
զաւակները, Հարստութեան և աղքատութեան

մէջ անհրաժեշտ է կենջ համար տնարարու-
թիւն. առանց անոր, կինը իր արժէքը կը
կորսնցնէ մեր միջավայրին համար, նաեւ աշխար-
հի համար ալ:

ՌՈԶՊԵՐԻ



ԳԱՆԳԱՏԱԳԻՐ



Տեարք և տիկնա՛ք, ահանջ դրէք,
Բայց չըլլայ թէ զիս մեղադրէք,
Գիտեմ, շատերդ ամեն գիշեր
խեղճիս նման անհանգիստ էք:

Յոգնած դադրած երբ կը պառկիմ,
Երեք բանէ շատ կը նեղուիմ,
Սիւրիսիւնէկն, Թախքապիքին՝
Բիշէին հետ վրաս թափին:

Այլիս ձախիս զիս դարձնեն,
Հիւսիս հարաւ պտըտցնեն,
Խայթոցներով խերս անիծեն,
Մինչև առտու հեղափ կընեն:

Բիշէին մին ահանջս մտնէ,
Դուրս փախչելու տեղ չը գտնէ,
Թը՛ն թը՛ն կընէ, ձայն կը հանէ,
Խենթենալս բան մ'ըսել չէ:

Թախքապիքին շատ գարշելի
Անտանելի՛ պիղծ հոտ ունի,
Տեղ տեղ խածնէ ու պահուրտի,
Երբ փնտռես՝ փութով փախչի:

Իսկ ահանջիս դուրսի դրան
Առջին կեցած՝ չալէ զոռնան,
Սիւրիսիւնէկն տը՛ղ տը՛ղ ձայնով
Գիթս ու ահանջս ծակծկելով:

Ճարս հատած ելլեմ նստիմ,
Մէկ երկու ժամ կը քթուրտիմ,
Բայց ի՛նչ օգուտ, երբոր պառկիմ,
Շունշանորդիք նորէն թափին:

Վրաս ոչ ճար, ոչ ալ ուժ կայ,
Ես այս ամառ հիւանդ եղայ.
Ցաւըս որու որ կը պատմեմ,
Ան ալ ինձ պէս լալկան գտնեմ:

Դեղ ու դարման ոչինչ բան է.
Աս երեքէն որին բաւէ.
Ամբան դիշեր անէծք, յիշոց,
Երկսեռ մարդկան սէրմայէն է:

Թաշֆօ

Վերջերս Կաղիոյ մէջ մարդ մը իր սիրուհին հետ քաղաքականապէս ամուսնանալու համար արձանագրութեան դիւանը երթալով, երբ քարաուղարը ի մէջ այլոց կըսէ թէ՝ «Կինը պարտաւոր է միշտ ամուսնոյն ետեւէն երթալու».

— Ո՛չ, կը պատասխանէ կինը, այդ կէտը ինձի համար ջնջեցէք:

— Եւ ինչո՞ւ:

— Որովհետեւ ամուսինս թղթատարութեան ցրուիչ ըլլալով, ամեն տեղ չեմ կրնար իր ետեւէն երթալ:

Գրաբոս աղանանուան տարեգարձին օրը քանի մը հիւրերու հետ տեսնուած ատենը իր 3-4 տարեկան մանկիկը խոժոռ դէմքով մը սրահէն ներս մտնելով կ'է գոչէ.

— Հայրիկ, Պետրոս աղան մայրիկիս երեսէն համբոյր մը առաւ:

Գրաբոս աղան ասիկա լսելով, մանաւանդ հիւրերուն քով, կաս կարմիր եղած ինչ ընելիքը չէր գիտեր:

Հիւրերէն մէկը որ փորձառու հայր մըն էր, քաղցրութեամբ աղուն մօտեցաւ ու թաշկինակը հանելով՝

— Ո՞ր երեսէ՞ք պագաւ, տղաս, ըսէ որ սըրբեմ:

— «Ի՞նչէ աս երեսէ՞ք ըսելով, պզտիկը այտերէն մէկը հիւրին ներկայացուց:

Ասոր վրայ ներկայ բազմեցան, հօրն ալ գոչնը տեղը եկաւ:

Պզտիկը սոյսը էր այտերէն մէկը հօրը՝ իսկ միւսը մօրը պագցնել:

Պետրոս աղան մօրը յատկացուած այսը պագեր էր:

— օ —

Յաճապակիէ տնօթներ վաճառող կին մը որ

իր խանութին դրանը առջեւ կեցած էր, քաղաքավարութեամբ կը բարեւէ այր և կին մը սրտնք փողոցէն կ'անցնէին:

— Կը ճանչնաս զանոնք, կը հարցնէ գրողի խանութպան մը:

— Ինչպէ՞ս, կը ճանչնամ մի՞. իմ լաւագոյն յաճախորդներս են: Օր չանցնիր որ իրարու գըլխու պնակ չնետեն:

Գեղանի տիկին մը, Բարիւղի Պօնմարչէին մէջ

— Սա պէպէքին գինն ի՞նչ է:

— Հինգ ֆրանք:

— Օ՛, շատ ուշ է:

— Եթէ կ'ուզէք, պզտիկ բալլաչօներ ունինք, հատը 40 սանդիմի:

— Շնորհակալ եմ, արդէն էրիկս ունիմ:

Ճաշարանի մը մէջ:

Տօքթորը — Բժշկութիւնը ձգելով, կ'ուզեմ խմբագրութեան սկսիլ:

Խմբագիրը — Ի՞նչ կըսես, տօքթոր, անցեալները չո՞ս օր ծով պահելով հալիւ կըցայ տպագրական ծախքերը հոգալ: Աւելի աղէկ կըլլայ ընկերութեամբ ճաշարան մը բանանք:

Ճաշարանապետը — Ներեցէք, տետրք, քանի որ դործերիս խեղճերու հետ պիտի ըլլայ, եկէք Բարեգործական ընկերութեան դործակալներ ըլլանք, որովհետեւ ժողովուրդը երեքնուսալ պէտք ունի:

Թ Ա Տ Ր Ո Ն Պ Օ Ր Ի Ս

Յառաջիկայ հինգ շաբթի գիշեր, յուլիս 17, «Վեսէլօ» Հայ դերասանական խմբին կողմէ առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացուի «Առաքինութիւնը միթէ՞» կը յաղթուի» անուն բարոյալից թատերախաղը 9 արարուած, ի նըպաստ խմբին դերակատարներէն Պրն. Ե. Երամեանի և Լ. Շաքարեանի, որոնք իրաւունք ունին յուսալ թէ թատերասէր հասարակութեան արդիւնաբեր ներկայութեանը պիտի արժանանան:

Փորձի դրուած է նաև

ՄԱՌԻ ԺԱՆ

անուն խիստ բարոյալից ընտանեկան տրամը:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ՀԱՂԻ ԲԱՆԱԲՕՏԱ

Քեճի-կեօզիւն/իւն սէյախարար

Յուլիս այրնոտա՝ Վառնանըն տէնիզ քէնա-
բընտաքի գրթաւընըն՝ ետնի հաճի Բանաքօ նամ
մահալին մէվսիմի օլուպ, կէրէք տէնիզ պաննօ-
տու իչիւն միտաֆիրէթէն սաիր շէհիրլէրտէն
կէլմիշ վէ կէրէք Վառնա ահալիսին հէր գըս-
մը՝ մահալը մէլքիւրտէ հէր աղչամ կէլինմէք-
լէ վագրթլարըն կէլիւմէք արլուստնտա տըր-
լար:

Պաղէն էհալինին գալապալըղը օ տէրէճէյէ
վարըր քի իյնէ աթլըսա ետրէ տիւշմէզ, իլլէ
ճուստա իրթէսի վէ բազար աղչամլարը գալա-
պալըգ տէրէճէսինի արթըրըր:

Իշպու գալապալըգտան իսթիֆատէ իթմէք
իշուն մահալը մէլքիւրտէ իւշ ատէտ թէաթրօ
վէ պիր տէ սիրք գուսթանեալարը պուլունուպ,
պիր ատամ օրալարտա կէլինտիլի վագըթ եա-
նըլըպտա էլինի ուղաթսա՝ անիտէ պիր ար-
թիսթէ թէսատիւֆ իտէր:

Էֆրեարըմըղ՝ պու թէաթրօլարը, գաղինօ-
լարը վէ արատա պիր կէօզտէն պիւթիւն պիւ-
թիւնէ նիհան օլմագ արլուսընտա օլուպ՝ տէնիզ
պաղչէսինին աղաճը շօսէլէրինին իչինտէ իճրա
օլունտն գօմէտիա մէնպարէլէրինի թարիֆ իթ-
մէք տիր, վէ պու իսէ՝ զաննը աճիզանէմիզէ
կէօրէ՝ օղույանլարըմըղըն ճիւլէսինին հօշունա
կիտէճէք տիր, չիւնքիւ պիր թագըմ՝ միւսիւլէ-
րին վէ մատմաղէլլէրին՝ զաշըրտըղլարը գըճը-
լարը էյլէնճէյէ պէօյիւք պիր սէրմայէ օլաճագ
տըր:

Իշպու մուխթասար մուդատտէմէտէն սօն-
րա՝ մէվզուր պահսա կիրիչէլիմ:

Կէչէն ճուստա իրթէսի աղչամըսը Պօրիս
նամ թէաթրօնուն էօնիւնտէ էրէյիճէ պիր գա-
լապալըգ թէրաքիւմ իթմիշ օլուպ, պիլէթ
ալմագ՝ սայրի մահալ գապիլինտէն իտի:

Իշպու գալապալըղըն իչինտէ իքի կէնճ
գըզ իլէ իքի տէլիգանլըլար պուլունմագտա ի-

տիլէր: վէ կէօրիւնիւշէ կէօրէ՝ թէաթրօյա կիր-
մէք արլուսընտա պուլունույօրլար իտի:

Մատմաղէլլէրտէն պիրի քէլամէ աղաղ իլէ:

—Թագօր պիրէ, պիլէթլէրի ալսանա հէր
քէս իչէրտէ եէրլէշտի պիլէ:

—Նէ՝ աճէլէ իտէյօրսուն մօրու, գօրգմա,
տըշարտա գալմաղըն:

—Պիրէ Կարպիս, հանկը՝ սըրայա օթուրա-
ճաաղ եա:

—Հը՛հ... պիրինճի սըրայա՝ մը իսթէրսին,
եիւրէյին աարմաղ մը:

—Է՛ նէ՝ պիրէ, օլաճաա՝ պիր ֆրանք տէ-
յիլ մի:

—Էօյլէ եա, սէնին պիր ֆրանք պաղանտը-
ղըն վա՛ր մը. պէն օնու գաղանմագ իչիւն՝ աղ-
չամա գատար անամ գօշալանըյօր:

—Եսմա պիրէ Թագօր, հատի կի, էլիմ,
թէ պագ Տիգրանուհի տէ պիրինճիյէ կիտէյօր,
պապաոր սարը պիլէթ ալմըշ:

—Սէն օնա պագմա՝ այօլ, թալուգ դաղա
պագմը՝ եուսուրթալըղըն պօղմա՝ շ տէրլէր, օ-
նուն պապաոր զէնկին տիր. բաշաօր վար, նէ՝
եաբաճան:

Պու արա Կարպիս պիլէթ մահալինտէն
տէօրթ թմանէ 50 սանգիւմիք պիլլէթ ալմըշ օ-
լուպ՝ նյունլարա եաղլաշտը:

—Գաշը՛գ տըր սիրէ:

—Եիւլլիւյէ պապամ եիւլլիւյէ, պիլիմ ի-
չին աղգային օլմալը. նէ՝ եաբաճան գարտաշըմ,
հաշլաքըզ ատամա հէր թիւրլիւսինի տէ էօյրէ-
տիյօր, նէ՝ տէրսին պէ Թագօր:

—Տօղրու գարտաշըմ, տօղրու սէօղէ ճանըմ
գուրպան, հատի իչէրիյէ պագալըմ, բէրտէ ա-
շըլաճագ:

(Տէվալի)

ԷԷՏԻ ԿԷՕԶԻ

ԱՅԻՆԷԻ ԼԷԹԱՅԻՓ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՒՆՏԷՐԻՃԸԹԸ)

Կիւլտի րիւճիւ ֆգրալար վէ շիքիայէլէր. Մալիւմա,
թը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի էյլէնճէ-
լէր վէ Բէսիմլի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ
նէշր օլունան մէլքիւր քիթապըն պիրինճի ճիւ-
աի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզտէ սա-
թըլմտգտաար. Ֆիյ 2 ֆրանք:

ԱՆՈՒՇԱՒԱՆ

ՀԱՅԻ ՀԱՍԱՐ

Կամ Աղջկան մը յիշատակաւանը

Վէպ մը իրական կեանքէ

(Մամլոյ տակ)

Այս վէպը որ կը պարտենակէ իր մէջ տեղակա-
կեանքէ գանազան պատկերներ, հրատարակութեան յանձն
նուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին
բաժանորդներ հրատարակութեան գիւրումներն ընծայ-
ուելու համար :

Բաժանորդին է 1 ֆրանք, բոսթի ծախքը հրատա-
րակին վրայ :

Տպագրութիւնը աւարտելուն գրքերը կը յանձնը-
ւին բաժանորդաց :

Գոյանալիք հասցիներ ամբողջովին կը նուիրուի «Հայ-
կական կարմիր խաչ»ի ընկերութեան :

Բաժանորդագրութեան համար գիմել հետեւեալ
հասցէին :

ՄՈՒՐԱՏ ԵՐԱՆՈՅԵԱՆ

(Պուլկարիա)

Վառնա

— ԼՈՅՍ ՏԵՍԱՆ —

Ֆրանսայի նշանաւոր վիպասաններէն

ՌԵՆԷ ՏԵ ՐՈՆ-ՎԷԻ

հեղինակութիւնը եղող

ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

անուն խիստ հետաքրքրաշարժ և
բարոյալից վէպին

13 հրորդ և 14 հրորդ թերթերը

Ամեն դասակարգի գիւրումաւորը պլաշը հա-
մար, գիրքը մասաւմաս, ծական երեսներէ բաղ-
կացեալ, շարաթը երկու թերթ պիտի հրա-
տարակուի և իւրաքանչիւր ծական երեսը պիտի
ծախուի **5 սանթիմի :**

Ամբողջութեամբ 24-25 թերթեր պիտի բաղկանայ :

Վառնայի համար բաժանորդագին **1 ֆր.**
Աւրիս Բաղաֆնեռու և առատաստիմանի հա-
մար **1.20 :**

Վառնայէ դուրս, Պուլկարիայ համար երեք
թերթ մէկ ծրարով կը ղրկուին. իսկ արտա-
ստահմանի համար հինգ թերթ մէկ ծրարի մէջ.
փոսթի ծախքը հրատարակին վրայ է :

Փափաքողք պետք է գիմեն հետեւեալ հասցէին :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՆՆԱՆԻ

Վ.Ա.Ռ.ՆԱ.

Գրամի փոխառէն նամակադրում ալ կրնդունուի

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅԵԼԻ»

Կը տպագրուին ամէն լեզուէ ալ յցետումս,
հասցէտումս, նամակագրութեան, հարսանեկան հրա-
ւիրագիր, մահազդ, թատերական աղբեր, տոմ-
սակներ, գիրք և յայտարարութիւններ :

Գիները յոյժ գիւրամատչելի :

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարու-
թիւնները ճշգրութեամբ և փութով կը կատար-
ուին :

Այցետումս տպագրել տուողներուն նուէր կը
տրուի «Ի՞նչպէս գործածելու է այցաքարտը» ա-
նուն հրահանգի գրքոյկ մը :

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՆԵՒԿ

ԾԱԽՈՒԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ
կը ծախուին :

Շուսինեան, Իշխան — Ֆրանսահայ Բառարան
գին 25 ֆր. ոսկեդրամ. Պուլկարահայ վարժա-
րանաց համար 20 ֆրանք :

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն
ՆՐՀԱԿ Բ. Ի և անոր Պապ ուղբեր. 2 ուկէս ֆր.

Թրթումներ (ոտանաւոր)	25	սնդ.
Հովատուն	25	"
Բառատարութիւն	20	"

Թ. Գ. Հինդիկան — Տեւական և գործնական
Քերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Շէյքսպիրի Համլէթը. ողբերգ. 2 50 ֆր.
Բաղդախաղ պատկեր 25 սնդմ.

Թատլաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ.
Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1
արար 50 սնդ.

Մահապիլիթիւն Բիւքեաֆաթը, գովէտի պիւր
բէրտէ, 50 սնդ.

Գողանճ գօճա Եախօտ Էնֆիլյէճի, գօճէտի պիւր
բէրտէ, 50 սնդ.

Печатница «Взаимость» — Варна